

Նպատակ 5: Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին

Չնայած Հագարամյակի զարգացման նպատակների շրջանակներում աշխարհն առաջընթաց է գրանցել գենդերային հավասարության և կանանց զորացման ուղղությամբ (ներառյալ աղջիկների և տղաների համար տարրական կրթության հավասար հասանելիությունը), սակայն ամբողջ աշխարհում կանայք և աղջիկները շարունակում են տուժել խտրականությունից և բռնությունից:

Գենդերային հավասարությունը ոչ միայն մարդու հիմնական իրավունք է, այլ նաև խաղաղ, բարգավաճ և կայուն աշխարհի անհրաժեշտ հիմքը:

Կանանց և աղջիկների՝ կրթության, առողջապահության, արժանապատիվ աշխատանքի և քաղաքական ու տնտեսական որոշումների կայացման գործընթացում ներկայացվածության հավասար հասանելիության ապահովումը նպաստավոր կլինի ոչ միայն կայուն տնտեսությունների համար, այլև, մեծ առումով, հասարակությունների ու մարդկության:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Միջինում, ամբողջ աշխարհում կանայք աշխատաշուկայում դեռևս 24%-ով ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ:

Ո՞րն Է նպատակը

Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին

Ինչո՞ւ

Կանայք և աղջիկները կազմում են աշխարհի բնակչության կեսը, հետևաբար նաև՝ դրա ներուժի կեսը: Սակայն ներկայումս գենդերային անհավասարությունը գոյություն ունի ամենուրեք և արգելակում է սոցիալական առաջընթացը:

2014 թ. դրությամբ 143 երկրներ իրենց սահմանադրությամբ երաշխավորել են կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը, սակայն 52 երկրներ դեռ պետք է կատարեն այդ քայլը:

Ի՞նչ կպատահի, եթե չապահովվի գենդերային հավասարությունը

Անհավասարությունները, որոնց բախվում են աղքիկները, կարող են սկսվել հենց ծնվելու պահից և հետևել նրանց ողջ կյանքի ընթացքում: Որոշ երկրներում աղքիկների համար հասանելի չեն առողջապահությունը կամ ճիշտ սնուցումը, ինչը հանգեցնում է մահացության բարձր մակարդակի:

Երբ աղքիկները հասնում են դեռահասության, գենդերային անհամամասնություններն ընդլայնվում են: Աղքիկներն ավելի շատ են առնչվում դեռահաս տարիքում ամուսնության խնդրին, քան տղաները: Ամբողջ աշխարհում ամեն տարի 18 տարեկանից ցածր շուրջ 15 մլն (կամ ամեն օր 37,000) աղքիկ ամուսնանում է:

Վաղ ամուսնանալն ազդում է նաև աղքիկների կրթության վրա: Չարգացող երկրների մոտ 1/3-ը տարրական կրթությունում չի հասել գենդերային համամասնության: Ենթասահարյան Աֆրիկայում, Օվկիանիայում և Արևմտյան Ասիայում աղքիկները տարրական և միջնակարգ դպրոց հաճախելու հարցում դեռևս բախվում են խոչընդոտների:

Ինչպե՞ս է գենդերային անհավասարությունն ազդում կանանց վրա

Կրթության բացերը հանգեցնում են աշխատաշուկայում անհրաժեշտ հմտությունների անմատչելիության և սահմանափակ հնարավորությունների:

Կանանց և աղքիկների զորացումը կարևորագույն նշանակություն ունի տնտեսական աճի ընդլայնման և սոցիալական զարգացման խթանման հարցում: Կանանց աշխատուժի լիարժեք մասնակցությունը կբարձրացնի ազգային աճի մակարդակը, շատ դեպքերում երկնիշ տոկոսային կետերով:

Կա՞ն, արդյոք, գենդերային այլ մարտահրավերներ

Այո: Ամբողջ աշխարհում կանանց 35%-ը ենթարկվել է ֆիզիկական և/կամ սեռական բռնության իրենց զուգընկերոջ կողմից կամ սեռական բռնության՝ որևէ այլ անձի կողմից:

133 մլն կանայք և աղքիկներ ենթարկվել են սեռական օրգանների խեղման Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի 29 երկրներում, որտեղ այս վնասակար սովորությունը դեպքերի մեծ մասում հանգեցնում է երկարատև արյունահոսության, վարակի (ներառյալ՝ ՄԻԱՎ), ծննդաբերության բարդությունների, անպտղության և մահվան մեծ վտանգի:

Ինչո՞ւ գենդերային հավասարության խնդիրը պետք է մտահոգի ինձ

Անկախ բնակավայրից՝ գենդերային հավասարությունը մարդու հիմնարար իրավունք է: Գենդերային հավասարության առաջխաղացումը վճռորոշ նշանակություն ունի առողջ հասարակության բոլոր ոլորտներում՝ աղքատության նվազեցումից մինչև տղաների և աղքիկների առողջության, կրթության, պաշտպանության և բարեկեցության խթանում:

Աղջիկների կրթության ծրագրերում ներդրումներ կատարելը և նրանց ամուսնության տարիքի բարձրացումը կարող է յուրաքանչյուր ծախսված դոլարի համար վերադարձնել 5 դոլար: Կանանց եկամտաբեր գործունեությունը բարելավող ծրագրերում ներդրումներ կատարելը կարող է վերադարձնել ամեն ծախսված դոլարի դիմաց 7 դոլար:

Ի՞նչ կարող ենք անել այս խնդիրը լուծելու համար

Եթե դու աղջիկ ես, դու կարող ես մալ դպրոցում, օգնել զորացնելու քո աղջիկ դասընկերներին և պայքարել սեռական ու վերարտադրողական առողջապահության ծառայություններից օգտվելու քո իրավունքի համար:

Եթե դու կին ես, դու կարող ես հաղթահարել չգիտակցված կողմնակալության և ոչ բացահայտ ասոցիացիաների խնդիրը, որը կարող է ոչ միտումնավոր և հաճախ անտեսանելի արգելք ստեղծել հավասար հնարավորության համար:

Եթե դու տղամարդ ես կամ տղա, դու կարող ես աշխատել կանանց և աղջիկների հետ մեկտեղ՝ հասնելու գենդերային հավասարության և շատագուցվելու առողջ և հարգալից հարաբերությունները:

Դու կարող ես ֆինանսապես մասնակցել կրթական արշավների անցկացմանը՝ ուղղված մշակութային այնպիսի սովորույթների սանձմանը, ինչպիսին է իգական սեռական օրգանների խեղումը, և վնասակար այնպիսի օրենքների փոփոխությանը, որոնք սահմանափակում են կանանց ու աղջիկների իրավունքները և արգելակում նրանց ներուժի լիարժեք իրացումը:

Կայուն զարգացման նպատակների և 5-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>